թիւնների. քամու մի շունչ — եւ այլեւս չկայ նա:

Այս ամէնը համարձակութիւն են ներշնչում նրան եւ բանալով իր բերանը, խզում է իր լռութիւնը եւ գիրի է առնում իր խոհերն ու մտածութիւնները, որպէսզի դէթ դրանով օգտակար լինի իր ազգին եւ իր հետ միասին «ամուր դամբանի մէջ չթաղեն այն, ինչ որ կարող է օգուտ բերել իր հայրենիքին» (38):

Պէտք է նկատել, որ հեղինակը երբեմն շատ մեծ դեր է վերապահում իր «Որ. Փառաց»ին, համարելով այն որպէս «հնար թեթեւացուցանելոյ ծանրութիւն բեռանց ազգին իմոյ եւ հիմն հաստատութեան վասն կազմելոյ տուն եւ բնակութիւն մեր, որ ի վաղնջուց յոյժ աւերեալ» (130). կամ՝ «կացին մի ծանր վասն խորտակելոյ լուծն ծառայութեան եւ ազատ առնելոյ ամենայն բնութիւն մարդոյ» (131): Սակայն ընդհանրապէս համեստ կարծիք ունի նրա մասին եւ համեստ նպատակ էլ դնում է նրա համար: Նա իր գրքի վրայ նայում է — ո՛չ աւել, ո՛չ պակաս — որպէս մի յուշարարի, մի ազդարարի վրայ, որը «իմաստունների եւ աւելի կարողների մէջ» բարի նախանձ պիտի շարժի եւ նրանց յիշեցնի՝ մի աւելի կատարեալ երկ այդ ուղղութեամբ աշխատասիրելու:

«Ինչ որ իմ կարծիքով համարեցի բարի իմ ազգի եւ աշխարհի համար, այդ ամենը գրի առայ այստեղ, որպէսզի ժամանակ-առ-ժամանակ իմ ազգի ընթերցողների աչքին զարնուելով, աւելի իմաստուններ — եթէ իրենց հաճելի թուի — լրացնելով իմ գրքի թերութիւնները, ջանան գործադրել» (38) — ահա՛ «Որ. Փառաց»ի գրութեան իսկական շարժառիթն եւ այն համեստ նպատակը, որ հետգհետէ դնում է նրա առջեւ:

Եւ շատ երջանիկ պիտի համարի իրեն, եթէ իր գիրքն այդ ծառայութիւնը մատուցանի իր ազգին. «իմ աչքի լոյսը եւ իմ սրտի սիրելին կը լինի նա, որը նախանձելով իմ գրքին, իր սրտի նախանձից գութով եւ սիրով կը լցուի եւ իմաստութեամբ կը շարադրի այն ամէնը, որով հնարաւոր է փրկել հայ ազգը ծառայութիւնից եւ մեզ դարձնել երջանիկ ու արժանի մեր նախահայրերի որդեգրութեան» (124):

Ու նա համոզուած է, որ հայ ազգի մէջ կը գտնուի «իմաստուն եւ ճարտարապետ մէկը, որը տեսնելով «Որոգ. Փառաց»ը, ինքն էլ կը ձգտի դէպի ազատութեան ճանապարհը եւ կը կարողանայ շարադրել մի գործ հազարապատիկ գերազանց, քան իր գիրքը» (23):

ԱԶԳԻ ԹՇՈՒԱՌ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայաստանի վիճակը ընդհանրապէս չափազանց մռայլ գոյներով է ներկայանում մեր հեղինակին: Ոչ միայն ներկայում, այլ եւ անցեալում շատ քիչ մխիթարական բան է գտնում նա: Աւելի. մինչեւ իսկ այն չրջանում, երբ հայերն անկախութիւն ունէին եւ իրենք էին իրենց երկրի — ինչպէս ինքն է ասում — տէրն ու թագաւորը, անգամ այդ չրջանում պատկերը շատ մռայլ է նրա համար: Ճիշդ է, այդ ընդհանուր ֆոնի վրայ երբեմն-երբեմն լուսաւոր կէտեր եւս նկատում է նա, սակայն շատ հազուադիւտ, ինչպէս ովազիսը անապատներում:

Աւելի ողբալի, ուղղակի յուսահատական է երեւում պատկերը յետ-անկախութեան չրջանում, այսինքն՝ այն 400 տարուան ժամանակում, որ նա հաչւում է Ռուբինեանց անկումից մինչեւ իր օրերը: Երկիրը անտէրունչ, քայքայուած եւ անկարող ինքն իրան պաշտպանելու: Նրա դռները լայն բաց են բոլոր թշնամիների առջեւ, որ դալիս են ամէն կողմերից: Բազմաթիւ բարբարոս ու թափառական ցեղեր, անապատից ծնած, փոթորկի նման դալիս եւ անցնում են նրա վրայով, աւեր, արիւն եւ ամայութիւն ձգելով իրենց յետեւից: Երկիրը վեր է ածուած մի դժոխքի, ուր ժողովուրդը դադար չունի, դլուխը դնելու տեղ չունի: Շատերը լեռների ու ծերպերի մէջ են թաղնուում. շատերն էլ իրենց փրկութիւնը որոնում են օտար հորիզոնների տակ, դաղթականութեան մէջ: Մարդիկ փախչում են իրենց հարազատ օջախներից եւ ապաստան են փնտռում անծանօթ վայրերում, ուր «մեր երկրի արջերը միայն կարող են բնակուել», ուր հայ մարդը յաճախ «տեղ չի գտնում իր մեռելը թաղելու համար» (99):

Կարճ. ազգի դրութիւնը աննախընթաց է — այդ հասկացողութեան ամենալայն իմաստով: Ով ուժեղ է՝ նրա տէրն է եւ ինչ ուզենայ՝ կ'անի: Իրերի այսպիսի վիճակը նա շատ դեղեցիկ, բայց ամփոփելն նկարագրում է այսպէս. «Եղաք իբր ձի ի տան չափառի պատրաս-